

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ
ՎԱՐԱԿՈՒՄԾՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ
ԿԸ ՀԱՍՆԻ 463-Ի

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵՑ ԱՐՏԵՐԿՐԻ
ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ ՏՈՒՆԴԱՐՁԸ
ԱՊԱՀՈՎԵԼ ԵՒ ՀԱՄԵՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ
ՊԱՏԿԱՆՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ
400 ՀԱՋԱՐ Լ. ՈՍԿԻԻ ԳՈՒՄԱՐ ՄԸ
ՏՐԱՄԱԳՐԵԼ



Կառավարությունը երեկ կեսօրե ետք ժամը 2:00-ին վարչապետարանին մեջ գումարեց իր նիստը՝ նախագահությանը վարչապետ Հասսան Տիապի:

Նիստին ընթացքին քննարկուեցան «Քորոնա» ժահրին վերաբերող վերջին իրադարձությունները, ինչպես նաեւ արտերկրի լիբանանցիներու տուճարծի թղթածրարը:

Նիստեն ետք տեղեկատուության նախարար Մանալ Ապտել Սամատ յայտնեց, որ վարչապետ Տիապ անդրադարձած է նախորդ երկու օրերուն ընթացքին ընդհանուր զօրաշարժին վերաբերող տեղեկագիրներուն եւ կարգ մը շրջաններու պարագային այդ տեղեկագիրներուն մանրամասնութիւնները մտահոգիչ նկատած: «Տիապ ընդգծեց ընդհանուր զօրաշարժը յաւելեալ խստութեամբ պարտադրելու անհրաժեշտութիւնը», ըսաւ Ապտել Սամատ:

Ան նշեց, որ վարչապետ Տիապ վերահաստատած է, որ կառավարութիւնը յանձնառու կը մնայ լիբանանցիներուն առողջական ապահովութեան պաշտպանութեան, ինչպէս նաեւ շէտած, որ արտերկրի լիբանանցիները պիտի վերադառնան՝ Լիբանանի առողջապահութեան նախարար Հասմատ Հասսանի ճշդած պայմաններուն համաձայն:

Ապտել Սամատ յայտնեց, որ կառավարութիւնը համաձայնած է 400 հազար Լ. ոսկիի գումար մը յատկացնել համատ դասակարգին պատկանող ըստանիքներուն՝ ընդգրծելով, որ այդ օժանդակութիւնները պիտի բաժնուին լիբանանեան բանակին կողմէ:

«Կառավարութիւնը համաձայն գտնուած է արտերկրի լիբանանցիներուն տուճարծը ապահովելու իմաստով նախարարական յանձնախումբին ներկայացուցած առաջարկին, պայմանով որ անոր վերաբերող կարգ մը մանրամասնութիւններ որդեգրուին եւ բարեփոխումներ կատարուին: Արտերկրի լիբանանցիներու տուճարծի ծրագիրը գործադրութեան պիտի սկսի կիրակի, 5 ապրիլ 2020-ին», ըսաւ Ապտել Սամատ:

Իր կարգին, աշխատանքի նախարար Լամիա Եամմի-նի գրասենեակը հրապարակեց հաղորդագրութիւն մը.

Շաբ.ը՝ էջ 2

ՀՕՄ-Ը ԻՐ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՑՈՒՑԱԲԵՐԷ ԱՐՑԱՆԻ ՄԷՁ «ՔՈՐՈՆԱ»-Ի ԴԷՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ



Հայ օգնութեան միութիւնը իր աջակցութիւնը կը ցուցաբերէ Արցախի մէջ «Քորոնա»-ի դէմ պայքարի աշխատանքներուն:

Հայկական մեծագոյն կնոջական բարեսիրական կազմակերպութիւնը, ՀՀ Դաշնակցութեան աջակցութեամբ, Արցախի առողջապահութեան նախարարութեան օժանդակութեան կոչին արձագանգելով, առողջապահական պարագաներ, որոնց մէջ մեծ թիւով ելեկտրոնային ջերմաչափեր ուղարկեց Արցախ: Բժշկական ապրանքներուն մէկ մասը ուղարկուած է Զանաւա-յէն: Այլ բաժին մըն ալ Արցախ պիտի հասնի Չինաստանէն:

Հայ օգնութեան միութիւնը Հայաստանի առողջապահութեան նախարարութեան հետ մարտի սկիզբը արդէն պայմանաւորուած էր սարքաւորումներու ապահովման գծով: «Յարդ Արցախի մէջ «Քորոնա» ժահրով վարակման դեպքեր չեն արձանագրուած, սակայն այս օժանդակութիւնը նախագգուշական քայլ է Արցախի մէջ վարակը կասեցնելու համար: Հակառակ բոլոր խոցընդոտներուն, սփիւռքի միասնական ուժերով մեր հայրենիքին մէջ պէտք է պայքարիք համավարակին դէմ», նշուեցաւ ՀՕՄ-ի հաղորդագրութեան մէջ:

Յիշեցնենք, որ 21 մարտին ՀՀ Դաշնակցութեան Բիւրոն կոչ ուղղեց կուսկցական կառոյցներուն եւ ուղեկից միութիւններուն՝ բոլոր ջանքերը գործադրելու համավարակին դէմ պայքարին համար:

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԻՆ ՄԱՍԻՆ. «ԱՍԻԿԱ ԵՐԿԱՐԱՍԵՒ ՊԱՅՔԱՐ Է»

Կանուխ է յայտարարել, որ «Քորոնա» ժահրին համաճարակը Ասիոյ շրջանին մէջ աւարտած է: «Ողթըրդ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այսպիսի կարծիք յայտնած է Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան Արեւմտա-խաղաղովկիանոսեան շրջանի տնօրէն Թաքէշի Զասայի:

«Նոյնիսկ այն պարագային, երբ ժահրի տարածման զապման ուղղուած քայլերը կը շարունակուին, շրջանին մէջ վարակի փոխանցման վտանգը պիտի չվերանայ, որովհետեւ համաճարակը կը շարունակէ ընդլայնել իր աշխարհագրական դիրքերը», յայտնած է Զասայի:

«Թոյլ տուէք յստակութիւն մտցնել: Ասիա-խաղաղովկիանոսեան շրջանին մէջ համաճարակը կարելի չէ աւարտած նկատել: Ասիկա երկարաժամկետ պայքար է, եւ մենք չենք կրնար թուլցնել մեր զգոնու-

թիւնը», ըսած է Զասայի:

Ան զգուշացուցած է, որ այն երկիրները, ուր «Քորոնա» ժահրով վարակման պարագաներու նուազում կը նկատուի, պէտք չէ թուլացնել իրենց զգոնութիւնը, այլապէս «ժահրը կրնայ վերադառնալ»:

«Առողջապահութեան միջազգային գործակալութիւնը չ'ակնկալէր, որ որեւէ երկիր անվտանգ պիտի ըլլայ եւ գերծ մնայ «Քորոնա» ժահրէն, որովհետեւ, ի վերջոյ, անկապ պիտի տարածուի ամենուր», յայտարարած է Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան **թեքնիք** հարցերով խորհրդական Մեթիւ Կրիֆիթ:

Մեքսիքայի առողջապահական խորհուրդը, որուն մաս կը կազմեն երկրի առողջապահութեան նախարարութեան ղեկավարութիւնը եւ դաշնակցային նախարարութիւններու շարք մը ղեկավարներ, առող-

Շաբ.ը՝ էջ 2

ԵՐՈՐՅԻ ԽՄԲԱԿԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ԵՐՈՐՅԻ ԳՕՏԻՆ ԲԱՅՔԱՅՈՒՄԵՆ

Երոյի խմբակի նախագահ Մարիօ Սենթեսիօ Եւրոպական երկիրներու ելեմուտքի նախարարները զգուշացուց «Քորոնա» ժահրի համաճարակին պատճառով երոյի գօտիի քայքայումէն:

Ելեմուտքի նախարարներուն յղուած նամակի մը մէջ ան նշեց. «Անկասկած, մենք բոլոր տաճաններէ դուրս պիտի գանք աւելի մեծ պարտքերով բեռնաւորած, սակայն այդ ազդեցութիւնն ու ատոր

երկարատեւ հետեւանքները պէտք չէ քայքայման ազդայ դառնան»:

Սենթեսիօ իր նամակին մէջ յայտնեց, որ միացեալ հակադարձութիւնը պէտք է ճշդուի 12 ապրիլին՝ Չատկուան տօնէն առաջ:

Նամակը յղուեցաւ Երոյի գօտիի անդամ 19 երկիրներու, ինչպէս նաեւ գօտիի անդամ չեղող, սակայն Եւրոպական Միութեան անդամ պետութիւններուն:

«ՍՈՒՐԻԱՆ ՊԻՏԻ ԶԿԱՐԵՆԱՅ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐԻՆ ԴԷՄ ԿԱՆԳՆԻԼ»

Կ'ԸՍԷ ՓԵԹԵՐՄԱՆ

Սուրիոյ հարցով ՄԱԿ-ի յատուկ պատկրակ Կիր Փեթերսըն հաւանական նկատեց, որ Սուրիան պիտի չկարենայ «Քորոնա» ժահրի տարածման արգելք հանդիսանալ՝ հակամարտող կողմերուն կոչ ուղղելով՝ կրակոցները դադրեցնելու:

Փեթերսըն ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի տեսաժողովի ընթացքին իր արտասանած խօսքին մէջ յայտնեց. «Գոյութիւն ունի այն մեծ վտանգը, որ Սուրիան չկարենայ համաճարակին դէմ կանգնիլ՝ նկատի ունենալով տեղահանութիւնն ու շարք մը գաղթականներու մէջ տիրող դժուար կացութիւնը»:

Ան նշեց, որ սուրիական կարգ մը շրջաններ տկար են կամ բացարձակապէս գոյութիւն չունին՝ աւելցնելով, որ զինեալ տագնապը, որ տարիներէ ի վեր կը շարունակուի, քանդած է առողջապահական խնամքի համակարգը:

Սուրիոյ հարցով ՄԱԿ-ի յատուկ պատկրակը աւելցուց, որ բժշկներու թիւի, բժշկական սարքերու եւ նիւթերու բաց գո-



յութիւն ունի:

«Ժահրը խտրութիւն չի դնէր կառավարութեան վերահսկողութեան տակ գտնուող շրջաններուն մէջ եւ անոնցմէ դուրս ապրողներուն միջեւ. անկապ բոլոր սուրիացիներուն կը սպառնայ», նշեց Փեթերսըն:

Ան նշեց, որ կոչ կ'ուղղէ ամբողջ սուրիական հողերուն վրայ զինադադար հաստատելու՝ «Քորոնա» ժահրին դէմ պայքարին առիթ ընծայելու համար:

«ԲՍԱՆՆԵՐՈՒ ԽՄԲԱԿ»-Ի ԱՌԵՏՈՒՐԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵՆ՝ «ՔՈՐՈՆԱ»-Ի ԴԷՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼՈՒ

«Զսաններու խմբակ»-ի անդամ երկիրներու առեւտուրի նախարարները նշեցին, որ «Քորոնա» ժահրին դէմ պայքարի անմիջական քայլերը պէտք է ճշդուած նպատակներ ունենան, եւ ըլլան պատշաճ, թափանցիկ ու ժամանակաւոր:

Նախարարները միացեալ հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեցին, որ այժմ ժամանակն է, որ միջազգային ընտանիքը աշխուժացնէ գործակցութիւնն ու համակարգումը ընդդէմ «Քորոնա» ժահրին:

Անոնք պատրաստակամութիւն յայտնեցին աշխատելու՝ երաշխաւորելու համար բժշկական կենսական սարքերու, հողագործական արտադրութիւններու եւ այլ հիմնական նիւթերու մատակարարման շարունակումը:

«Ամիջական քայլերը պէտք չէ անհարկ արգելքներ ստեղծեն կամ խանգարեն համաշխարհային մատակարար-



ման հեզասահ ընթացքը եւ պէտք է համահունչ ըլլան Առեւտուրի միջազգային կազմակերպութեան կանոններուն», շեշտեցին նախարարները:

«Զսաններու խմբակ»-ի անդամ պետութիւններու առեւտուրի նախարարները վերահաստատեցին, որ պիտի շարունակեն միասնաբար աշխատիլ՝ գտնելու համար առեւտուրի եւ ներդրումի մթնոլորտ մը, որ ազատ, պարկեշտ, կայուն ու թափանցիկ է եւ առանց խտրականութեան:

ԱՐՑԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՌՆԱԿՑԵՑԱՆ 76.471 ՔՈՒԷՄՐԿՈՂՆԵՐ



Երեկ՝ երեքշաբթի, 31 մարտ 2020-ին, Արցախի մէջ տեղի ունեցան նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնները, որոնց սկսան առաւօտեան ժամը 8:00-ին, երբ բացուեցան 282 ընտրական տեղամասերը, որոնցմէ մէկը կը գտնուի Երեւանի մէջ՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ Արցախի Հանրապետութեան մնայուն ներկայացուցչութեան շէնքին մէջ, այլ տեղամաս մըն ալ հաստատուեցաւ Շուշիի քրեակատարողական հիմնարկին

Շաբ.ը՝ էջ 3

ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ԱՐՑԱԽՅԻՆ ԴԱՐՁԵԱԼ ԱՊԱՑՈՒՅԵՑ, ՈՐ Կ'ԱՌԱՋՆՈՐԴՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՅԻ ԳԵՐԱԿԱՅ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ»

Հայ յեղափոխական դաշնակցութեան կողմէ Արցախի նախագահական թեկնածու Դաւիթ Իշխանեան կոչով մը ուղղուեցաւ Արցախի ժողովուրդին, որուն մէջ նշեց.

«Այսօր Արցախի մէջ նշանակալի օր է: Ըստ Կեդրոնական ընտրական յանձնախումբին հրապարակած պաշտօնական տեղեկատուութեան, համապետական ընտրութիւններուն մասնակցած է ընտրողներուն գերակշիռ մեծամասնութիւնը:

Շաբ.ը՝ էջ 3

ՄԵՆԱԲԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ «ՉԵՆ ՃԱՆՉԱՐ, ԲԱՅՑ Կ'ԸՆԴՈՒՆԻՆ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ» ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՁ

ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները հանդես եկած են յայտարարութեամբ՝ երեկ Արցախի մէջ կայացած նախագահական – խորհրդարանական ընտրութիւններուն վերաբերեալ:

Շաբ.ը՝ էջ 3

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԵՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻՆ «ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԻԾԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄՈՎ



Հայաստանի Ազգային ժողովը երեկ երրորդ արտահերթ նիստին երկրորդ ընթերցումով ընդունեց «Արտակարգ դրութեան իրաւական դրութեան մասին» եւ «Ելեկտրոնային հաղորդակցութեան մասին» օրէնքներուն մէջ փոփոխութիւններու փաթեթը: «Բնակչութեան բժշկական օգնութեան եւ սպասարկման մասին» օրէնքին մէջ լրացումներ կատարելու մասին նախագիծն ալ ընդունուեցաւ երկրորդ ընթերցումով:

Շաբ.ը՝ էջ 4

«ՔՈՐՈՆԱ» ԺԱՀՐԸ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Առաջին հերթին, քնականաբար, մեր բոլորին մտա-ծումները եւ ցաւակցական խօսքերը կ'երթան համաշ-խարհային մակարդակով տարածուող եւ մեծ աւերներ գործող «Քորոնա» ժահրին իբրեւ հետեւանք ցարդ արծա-նագրուած տասնեակ հազարներով զոհերուն պարագա-ներուն եւ նոյն համաճարակէն վարակակիրներուն՝ վեր-ջիններուն մաղթելով շուտափոյոթ ապաքինում։

Ինչպէս նաեւ պէտք է խոնարհիլ բոլոր երկիրներու եւ պետութիւններու առողջապահական համակարգին սպա-սարկող իւրաքանչիւր նուիրեալի առջեւ, որ մէկ շունչով կը պայքարի «Քորոնա» ժահրին դէմ։ Յարգա՛նք ու գնահա-տանք բոլոր գիտնականներուն, փորձեստօրներուն եւ յատկապէս բժիշկներուն ու անոնց օգնականներուն՝ անոնց ցուցաբերած գերմարդկային ճիգին, անձնագոհու-թեան համար. արդարեւ, իրենց սրբազան առաքելութեան սկզբունքին հաւատարիմ, անոնք, խնդրոյ առարկայ դարձնելով անձնական առողջութիւնը, կը փորձեն ամե-նուրեք եւ ամէն օր կեանքեր փրկել։

Անկասկած, այսօր բոլոր երկիրներու, պետութիւննե-րու եւ քաղաքական իշխանութիւններու թիւ մէկ հրամա-յականը, նպատակը համապետական եւ համամարդկա-յին կարողականութիւնները զօրաշարժի ենթարկել է՝ ի խնդիր տուեալ երկիրներու քաղաքացիներու առողջու-թեան ապահովման, օժանդակութեան եւ բոլոր անհրա-ժեշտ ու կենսական սննդաբան կարիքներու ապահով-ման, ինչպէս նաեւ ժամանակաւորապէս քաղաքացիները գերծ պահելու ամէն տեսակի պետական տուրքերէ։ Անոնք կը միտին անկաշքայուր ըլլալ աշխատանքէ ար-ձակուած անհատներուն դիմագրուած խնդիրներուն եւ ընձեռել պետական վարկային այլափիւր քաղաքականու-թիւն մը, որպէսզի անհատներ, ընտանիքներ, ընկերու-թիւններ եւ ժողովրդային որոշ շերտեր կարենան տոկալ եւ դիմակայել ներկայ առողջապահական, ընկերային եւ տուր տնտեսական ճգնաժամը։

Ի դէպ, Լիբանանի պարագային ԳՅ Դաշնակցութեան լիբանանեան կառոյցը բոլոր ժողովուրդներուն ողբերգու-թիւնը հանդիսացող «Քորոնա» ժահրի երեւոյթի ծագման առաջին օրերէն Շտապ մը կազմաւորեց իր կարողութեան համետ տայմաներուն մէջ կարելի եղած չափով օժան-դակելու զաղութի բոլոր կարիքաւոր զաւակներուն անխը-տիր, կացութիւնը մեղմացնելու եւ մանաւանդ համաճա-րակի սպառնալիքը հեռացնելու նպատակով առարկաներ բաշխելու աշխատանքի մը դիմեց՝ նախապատրաստուե-լով երկրորդ փուլով կարիքաւոր ընտանիքներու օժանդ-ակութիւններ տրամադրելու եւ նպաստաբաշխումի աշխա-տանքներուն։

Այսօր իրապէս ժամանակն է նուիրաբերելու, իւրաքան-չիւր անհատ իր կարողութեան սահմաններուն մէջ պէտք է մասնակից դառնալ, ոմանք՝ Նիւթական, ուրիշներ՝ ?Ֆի-զիքական եւ կազմակերպչական, այլոք՝ բժշկական եւ մասնագիտական, որպէսզի միասնականութեամբ եւ հա-ւաքական ուժերով կարենանք յաղթահարել այս դժուար փուլը։

Այսուհանդերձ, պէտք է արձանագրել, որ, թէեւ այսօր-անս հրամայականը աշխարհով մէկ «Քորոնա» ժահրին դէմ համընդհանուր պայքարն է, բայց եւ այնպէս պէտք է այսօրուընէ մտածել այնպիսի վաղուան մը մասին, յատ-կապէս աշխարհի «Մեծերը», որ քնաւ չնմանի համաշ-խարհային տարողութեամբ այսօրուան երկիրներու եւ պետութիւններու կայտաւճափար իրողութեան, երկիրնե-րու առողջապահական համակարգի դուարութիւննե-րուն, ընկերային եւ տնտեսական անհաւոր իրավիճակնե-րուն։

Փաստօրէն, պէտք է նաեւ արձանագրել, որ «Քորոնա» ժահրի առկայութիւնը եւ համաշխարհային տարողու-թեամբ տարածումը փաստեց դրամատիրական համա-կարգի ծախողութիւնը, ներկայ համաշխարհային պետա-կան համակարգի եւ քաղաքական իշխանութիւններու փլուզումը։ Արդարեւ, անոնք քնաւ պատրաստ չէին, հա-կառակ բազմաափսի եւ բազմատեսակ գիտական նուա-ճումներուն, դիմակայելու «Քորոնա»-ի կամ այլ տեսակի համաճարակի մը սպառնալիքին ստեղծած խուճապային իրավիճակներուն, քնաւ պատրաստ չէին կանխելու զոհե-րու եւ վարակակիրներու թիւերու անաւորութիւնը կամ մեղմմելու առհասարակ քաղաքացիներու իրավիճակը։

Արդարեւ, անհերքելի իրողութիւն է, որ գերպետութիւն-ները, ճարտարարուեստականացած երկիրները, հզօրա-գոյն ժողովրդավարութիւնները, Եւրոպական Միութիւնը եւ այլ միջազգային հաստատութիւններ ու կազմակեր-պութիւններ փաստացի անողոշութեան եւ անկարողու-թեան առջեւ յայտնուեցան։ Ինչո՞ւ։ Որովհետեւ վերջին յի-սուս տարուան ընթացքին աշխարհի «Մեծերու» որդեգ-րած քաղաքական վարդապետութիւնները եւ ռազմավա-րութիւնները ստորադասեցին մարդը, կրթութիւնը, գի-տութիւնը, մշակոյթը, կլիման, առողջապահութիւնը, ըն-կերային արդարութիւնը եւ գերադասեցին դրամատիրու-թեան անտառձի օրէնքը, Նիւթը, շահը, առարկան, չոր ու վայրի տնտեսութիւնը, անհաւասար եւ անարդար մրցա-ցութիւնը, գինուրակեան ճարտարարուեստը եւ այլոց տարածքները նուա՞ճելու վարքագիծը։

Արդարեւ, այսօր, «Քորոնա» ժահրի յայտնութեամբ եւ սարսափելի տարածումով անհրաժեշտութիւնը փաստը-ւեցաւ։ միանշանակ վերատեսութեան ենթարկելու համաշ-խարհային ամբողջ համակարգը, միջազգային ընտանի-քի արժեքամակարգը, միջպետական յարաբերութիւննե-րու ձեւաչափը եւ այլն…

Սակայն, մինչ այդ, պէտք չէ մտահան ընել, որ «Քորո-նա» ժահրին դէմ համընդհանուր պայքարին մէջ իւրա-քանչիւր անհատ իր մասնակցութիւնը ունի՝ կարգապա-հութեամբ հետեւելու պետական բոլոր սահմանափա-կումներուն, թէյադրանքներուն եւ ցուցմունքներուն՝ նուազագոյն շփումներ ունենալ, քնակարաններէն դուրս չելլել, նախագգուշական բոլոր անհրաժեշտ միջոցառում-ներէն չիրաժարիլ, որպէսզի կարելի ըլլայ նուազագոյն չարիքով եւ զոհերով յաղթահարել ժողովուրդներու այժ-մու ողբերգութիւնը հանդիսացող «Քորոնա» ժահրին սպառնալիքը եւ յաղթական դուրս գալ անոր դէմ մղուած պայքարէն։

ՄԵՆԻՔ ԳՐԱՐԳԱՌՈՐԵԱՆ

ՊՈՒՐՈ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

(ՈՒՂՈՒՄԾ՝ ԶԱՐԱՔԱՓԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԵԼԵԿՏՐԱԾԻՆ ԵԱՐԺԱԿՆԵՐՈՒ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐՈՒՆ, 2020 ՄԱՐՏԻ 5 ԱՍՓԵՐԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՃԱՐՈՒՄԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)



Նկատի ունենալով «Քորոնա»-ի ժահրին ստեղծած տագնապը եւ հիմնուելով կառավարութեան տուած ընդհանուր զօրաշարժի որոշումին վրայ, ինչպէս նաեւ նկատի ունենալով, որ քաղաքացի-ները այդ որոշումին յանձնառու մնացին՝ տուել մնալով եւ աշ-խատանքէ դադրելով, իսկ շրջանի բոլոր վաճառատուները փա-կեցին իրենց դռները,

Պուրծ Զամուտի քաղաքապետութիւնը որոշած է հետեւեալը.

Ա) Պուրծ Զամուտի շրջանի ելեկտրածին շարժակներու սեփականա-տերները շրջանի բնակարաններուն համար իրենց հայթայթած 2020 մարտի 5 ամփե-րի ելեկտրականութեան համար իբրեւ վճարում միայն 45.000 լ. ոսկի կը ստանան քաղաքացիներէն եւ այդ վճարումին հիման վրայ կը ճշդուին 3 եւ 10 ամփերներուն սակերը։ Իսկ այն վաճառատուները, որոնք փակ կը մնան, անոնց սեփականատէրե-րը եւս միայն 45.000 լ. ոսկի կը վճարեն, ի՛նչ ալ ըլլայ իրենց համար ճշդուած ելեկտը-րականութեան ամփերը։ Պուրծ Զամուտի քաղաքապետարանը ամէն ամսուան աւարտին նման հաղորդագրութիւն պիտի հրապարակէ՝ ճշդելու համար 5 ամփեր ելեկտրականութեան սակը, մինչեւ «Քորոնա»-ի ժահրի պարտադրած տագնապին աւարտիլը։

Բ) Ելեկտրածին շարժակի իւրաքանչիւր սեփականատեր, որ չ'ենթարկուիր այս հաղորդագրութեամբ փոխանցուած որոշումին եւ բաժանորդ քաղաքացիները կը զրկւէ ելեկտրականութենէ, պիտի ստիպէ, որ քաղաքապետութիւնը գրաւէ իր շարժա-կը եւ ինք ստանձնէ զայն բանեցնելու ու ելեկտրականութիւն հայթայթելու աշխա-տանքը՝ մինչեւ տագնապին եւ ընդհանուր զօրաշարժի աւարտը։

Գ) Պուրծ Զամուտի բնակիչներն ու իրենց վաճառատուները փակած գործատէրե-րը պարտին հաղորդակցիլ քաղաքապետարանին հետ՝ հեռաձայնելով 01-260155 եւ 01-256402 թիւերուն, եթէ ելեկտրածին շարժակներու սեփականատերերը նախան-ձախնդիր չըլլան այս հաղորդագրութեան բովանդակութիւնը գործադրելու։

ՊՈՒՐՑ ԶԱՄՈՒՏԻ ԶԱՐԱՔԱՊԵՏ ՄԱՐՏԻԿ ՊՕՐՈՍԵԱՆ

ԴԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆ. «ԱՐՑԱՆՅԻՆ ԴԱՐՁԵԱԼ ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Արցախցին դարձեալ ապացուցեց, որ կ'առաջնորդուի պետական շահի գերակայ թելադրանքով։
«Շնորհակալութիւն կը յայտնեմ մեր հայրենակիցներուն՝ իրենց քաղաքացիա-կան պարտքը կատարելու եւ պատասխա-նատու կեցուածք ցուցաբերելու համար։
«Անկախ քաղաքական հայեացքներէն եւ քուէարկութեան արդիւնքներէն, մեզ կը միաւորէ հայրենիքի բարօրութիւնն ու զարգացումը յառաջ տանելու վճռականու-թիւնը», ըսած է Իշխանեան։
Դաւիթ Իշխանեան քուէարկեց յանուն միասնութեան եւ խաղաղ ապագայի, որ ձեւով մը պայմանաւորուած է Արցախի քաղաքական կեանքին մէջ Դաշնակցու-թեան լիարժեք մասնակցութեամբ։
Քուէարկելէ ետք լրագրողներուն հետ ունեցած գրոյցին ընթացքի՝ անդադառ-նալով ընտրութիւններուն Դայաստանի իշ-խանութիւններու միջամտութեան հարցին՝ Դաւիթ Իշխանեան նշեց, որ իշխանութիւն

ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԽԱԳԱՀՆԵՐԸ...

Շարունակուած Ա. Էջէն

«ԵԱԿԿ-ի Մինսքի խմբակի համանա-խազահները (Իկոր Փոփովը՝ Ռուսիայէն, Սթեֆան Վիսընկիսի՝ Ֆրանսայէն, Էստրի Շոֆֆըը՝ Միացեալ Նահանգներէն) ի գի-տութիւն ընդունած են Լեռնային Դարաբա-ղի մէջ այսպէս կոչուած «համապետական ընտրութիւնները», որոնց առաջին փուլը տեղի ունեցած է 31 մարտին։
Լեռնային Դարաբաղի տագնապի հա-մապայփակ լուծման ծիրին մէջ համաժա-խազահները կը ճանչնան Լեռնային Դա-րաբաղի բնակչութեան դերը իրենց ապա-գան որոշելու գործին մէջ՝ համաձայն այն սկզբունքներուն եւ տարրերուն, որոնք հաստատուած են համանախազահներու՝ 9 մարտ 2019-ի յայտարարութեամբ։ Սա-

ԱՐՑԱՆԻ ՆԽԱԳԱՀԱԿԱՆ ԵՒ...

Շարունակուած Ա. Էջէն

մէջ։ Ժամը 20:00-ին փակուեցան ընտրական կէտերիները։
Արցախի Զանրապետութեան Կեդրոնա-կան ընտրական յանձնախումբին կողմէ տրամադրուած տուեակներուն համաձայն, Արցախի Զանրապետութեան ընտրողներուն թիւը կը կազմէ 105.251։ Ընտրութիւններուն մասնակցած են 76.471 ընտրող (ընդհանուր թիւին 72.7 առ հարիւրը)։ Գործեցին 8 ընտ-րական յանձնախումբեր՝ Ստեփանակերտի եւ Արցախի 7 շրջաններուն մէջ։
Արցախի Զանրապետութեան նախագա-հի եւ Ազգային ժողովի համապետական ընտրութիւններուն դիտորդական առաքելու-թիւն իրականացնելու եւ ընտրութիւններուն ընթացքը լուսաբանելու համար Կեդրոնա-կան ընտրական յանձնախումբին մօտ հա-ւատարմագրուած է 963 դիտորդ եւ լրատ-ւամիջոցներու 231 ներկայացուցիչ։
Արցախի նախագահական պաշտօնին համար կը պայքարէին 14 թեկնածուներ՝ Քրիստին Բալայեան, Վիթալի Բալասանեան, Սերկէյ Ամիրեան, Դաւիթ Բաբայեան, Բեյա Լալայեան, Արայիկ Յարութիւնեան, Զայկ անումեան, Դաւիթ Իշխանեան, Վահան Բադասեան, Մասիս Մայիլեան, Աշոտ Դուլ-եան, Ռուսլան Իսրայելեան, Աշոտ Դադալ-

ՎԵՐՁԵՐՍ «ՔՈՐՈՆԱ» ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ԱՐԺԱՆԻ ՅԱՐԳԱՂ-Ք՝ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ

«Համաճարակներու ընթացքին եւ այլ վտանգաւոր կացութիւններու ընթացքին պիտի կատարեն իմ պար-տականութիւններս՝ իբրեւ բժիշկ, մոռնալով անձ»։

«Հիփոկրատի ուխտ»

Բժշկութեան նախա-հայր Հիփոկրատի տաքը կետերէ բաղկացած «Ուխ-տը» որքա՛ն կը համընկնի վերջերս աշխարհին եւ Լի-բանանի դիմագրուած «Քորոնա» ժահրի համա-ճարակին ահաւոր կացու-թեան ի տես։ Արդարեւ, իւ-րաքանչիւր բժիշկ երբ բժշկական ասպարեզը կ'ընտրէ, այս ուխտը կը կատարէ՝ հաշուետու ըլլա-լով նախ իր անձին, հիւան-դին եւ ամէնէն կարետորդ՝ Աստուծոյ հանդէպ։ Ի զօր չէ այն հաստատումը, որ կեանքին մէջ երկու ասպա-րեզներ կան, որոնք անմիջական կապ ունին մարդ Էակին կազմաւորման եւ գոյատեման կետ։ Առաջին ասպարեզը ուսուցչութիւնն է. ուսուցիչը կը կերտէ մարդ անհատը՝ անոր մէջ զարգացնելով բազմաթիւ հմտութիւններ, քննա-կան միտք, առողջ դատողութիւն եւ անհատականութիւն, իսկ երկրորդ կարետոր ասպարեզը բժշկութիւնն է, ուր բժիշկը կոչուած է փրկելու մարդոց կեանքը, ամոքելու հիւանդներուն ցաւերը եւ հասնելու բոլոր դասակարգերու մարդոց՝ առանց խտրութեան։ Այս երկու ասպարեզները



սակայն մէկը միւսը չի գերազանցեր անհրաժեշտութեան եւ առաջնակարգ դիրք գրաւելու առումով. այլ երկուքը գի-րար կ'ամբողջանան, որովհետեւ գիտակից եւ իր կեանքի ուխտին հաւատարիմ ու խղճամիտ անհատին համար ու-սուցչութիւնն ու բժշկութիւնը առաքելութիւն են ու գոհողու-թիւն։ Այս յօդուածով չեմ ուզեր թերագնահատել ուսուցչին անուրանալի դերը, սակայն կ'ուզեմ անդրադառնալ այն մարտահրաւերներուն, որոնց հետ բժիշկները դէմ յանդիման կը գտնուին իրենց առաքելութեան դրսեւորման ընթացքին։

Կասկածէ վեր է, որ բժշկութիւնը առէտրական ու շահա-դիտական մտորումներէ շատ աւելի բարձր է։ Բժիշկ եւ բա-նաստեղծ Ռուբէն Սեւակ իր «Հրաշալի բժշկութիւն» յօդուա-ծին մէջ այսպէս կը բնորոշէ բժիշկին առաքելութիւնը. «Եթէ դուն իրապէս բժիշկ ես, հիւանդներու փրկութեան համար իրաւունք չունի՛ս որեւէ միջոց մերժելու այդ նպատակին հասնելու համար։ Սահմանափակ ու այլամերժ բժշկութիւն մը գիտակից ոճրազործութիւն մըն է։ Պիտի դիմես հնարա-ւոր բոլոր ազդակներուն։ Դեռն ու դանակը, ջուրն ու կրակը, ելեկտրականութիւնն ու մագնիսականութիւնը, գիտու-թիւնն ու հաւատքը՝ փոխն ի փոխ ըս. գէլքեդրդ պիտի ըլլան. որովհետեւ այն ախտերը, որոնց դէմ կը կռուիս, տարբեր հիւանդներու մէջ, տարբեր գէլքերու կը դիմես»։

Ի՛նչ վէտ եւ մարդասէտ առաքելութեան մը կոչուած է նաեւ այսօր աշխարհի տարածքին եւ այս պարագային Լիբանանի մէջ գործող առողջապահական համակարգի անձնակազմը, որ կ'ընդրէ բժիշկները, հիւանդապահնե-րը, բուժօրյոյրերը, դեղագործները եւ Կարմիր խաչի կամա-ւորները, որոնք օրն ի բուն, հեռու՝ իրենց ընտանիքներէն եւ հարազատներէն, կը պայքարեն 21-րդ դարուն աշխար-հին մէջ յայտնուած ու տարածուած այս անտեսանելի թշնամիին՝ «Քորոնա» ժահրին դէմ։ Անոնք նաեւ մեծ հա-մեմատութեամբ տարածուող այս ժահրին դէմ կը պայքա-րին, վտանգի ենթարկելով նաեւ իրենց կեանքը՝ միշտ ի մտի ունենալով «Հիփոկրատի ուխտը» կատարելու իրենց պարտականութիւնը եւ մոռնալով իրենց անձերը։

Երեք օր առաջ՝ կիրակի, 29 մարտին, Լիբանանի տա-րածքին գօտեպաղիչ երեւոյթ մը պարզուեցաւ, երբ երեկու-նան ժամը 8:00-ին մեկնացանք մեզ գտնուող բոլոր քա-ղաքացիները իրենց տան պատշգամներէն մէկ վայրկեան ծափահարութեամբ իրենց շնորհակալութիւնն ու երախ-տագիտութիւնը, ինչու ոչ նաեւ զօրակցութիւնը յայտնե-ցին «Քորոնա»-ի դէմ պայքարող առողջապահական հա-մակարգի անձնակազմին եւ «անյայտ գինուորներուն»։ Որքա՛ն յուսադրիչ էր տեսնել ապահովական ուժերու ջո-կատներու եւ կարգ մը քաղաքապետութիւններու երախ-տագիտական արտայայտութիւններն ու «Պատուի՛ առ» յարգանքի բարեկենդը՝Պէյրութի կառավարական հիւանդա-նոցին դիմաց՝ բժիշկներուն եւ հիւանդապահներուն ուղ-ղուած։ Վերջ ի վերջոյ բովանդակ իմաստով խրախուսիչ էր այս երեւոյթը՝ մարդ անհատին կեանքը փրկող նուիրեալ անձերուն՝ բժիշկին եւ հիւանդապահին հանդէպ։

Կը մնայ, որ մենք իբրեւ մարդ միշտ արժեւորենք առող-ջապահական համակարգի անձնակազմին անդամները, որոնց նուիրումը եւ ծառայութիւնը անսակարկելի են՝ եթէ մէկ կողմէ կեանքը կը փրկեն, իսկ միւս կողմէ գիրեք մնայուն վտանգի դէմ յանդիման կը դնեն։

Յարգա՛նք, ո՛ւժ եւ կորով մեր առողջութիւնը պահպա-նողներուն։

ԿԱՐՈ ԱՐԱՇԱՐԵԱՆ

